

Լոյսնայէն թէ՛ ֆրանսիայի բազաքապական գործիչի դերը զուտ բացասական է՝ յանդանըդ ոչ պարզամենտիոն է եւ ոչ հանրապետութեանը որոնք սոսկ կառավարչական ձեւեր են. ամեն բան կախված է այն պայմանից, թէ ինչո՞վ են լցված այդ յարմարագոյն համարված ձեւերը։ Անա հէնց այստեղ էլ պարզվում է հարցը։ Փրանսիական պարլամէնտը (ինչպէս եւ միւս երկիրներում) բաղկացած է իննսուս տոկոսով ներկայուն սիրող եւ նշխթականապէս ուժեղ բուրժուա դասակարգի ներկայացուցիչներից։ Այդ դասակարգը եւ պարլամէնտի մեծամասնութիւնը ըսէր եւ իշխող է՝ ֆրանսիական ժողովրդի վրա։ Այդ դասակարգից է կազմվում կառավարութիւնը, որը հրկաւ բուրժուադէպի չանհրկի պաշտպան այտք է լինի հետեւեալէն եւ հակառակ պիտի գնայ ժողովրդի չանհրկն

Ծերադած՝ Ֆրանսիական բուրժուա դասա-

կարգը ամեն տեղ ցայց է տալիս իր անկարողութիւնը ու բարոյական անանկութիւնը։ Աւելի եւս, նա սկսեց է դարաշահութիւն արձակել եւ չէ ուզում տեսնել, որ դա իր ամբողջ կազմի մի մասն է, որ այլ եւս ներկայումս է եւ ընդարարվում է Բուրժուա դասակարգը եւ նրա հետ նրա մամուլը, գրականութիւնը, նրա Բրինճարեղէնները կամ Բուրժուները կարծում են, թէ չարիքը ժողովրդի կաթօլիկութիւնիցն է հեռանալն է եւ կամ հանրապետութեան ղեկավար տղեղեցութիւնը, որ անօգուտ պարտաւնա է տալիս Բնական է, որ բուրժուադատեան ձեւացնում է իրան, թէ տեսնում է ամեն ինչ, բացի այն բանից, որ ինքն էլ հնացել անպէտքացել եւ ղեկավար է դարձել քաղաքակրթութեան էվոլյուցիայի տեսակէտից, եւ որ վերջապէս պարտաւնա է մեծ մասն ու թիւեր իր հարազատ դաւաններն են եւ իր դասակարգային շահերի ու հասկացողութիւնների ներկայացուցիչները։ Մենք ընդգծում ենք մեծամասնութիւնը բառը, որովհետեւ հենց ներկայ պարտաւնաութիւն գոյութիւն ունի նոյնպէս եւ մի շատ համեստ փոքրամասնութիւնն է, որ ֆրանսիական ժողովրդի, բայց իր դասակարգային ինքնագիտակցութեան ճանաչ ժողովրդի, աշխատւոր դասակարգի ներկայացուցիչն է եւ տիրող դասակարգի ներկայացուցիչ մեծամասնութիւնը օրէցցի կորիցնելով իր յենակետը, քանի գնում աւելի եւ աւելի տեղի է տալիս նոր ծնված հասարակական ոյժին—այդ փոքրամասնութեան։ Տնտեսական կեանքը սնանկացած հասարակութեան տակ փորել է սրահակները, որոնց տակ ձեւատարդական անշարժեղութեանը նոյն հասարակութիւնը պիտի խորտակվի։ Բայց ինք-

ՌՈՒՐԷՆ ԲԵՐԵՆԵԱՆ

նողական
ները կամ
հանդիպու
թյունի իր
ուշադրու
մեզ հա
լինել է սա
րաւորներ
եկեղեցակ
տնօրէնէք
բաւական
ղարաւոր
կեանք, ք
նողը, սա

վրա գրողների տպագրութիւն կը գործէ, եւ կարծում եմ, բացատրութեան կարօտ չէ. չէ որ տիրող օրէնքն էլ, այն օրէնքը, որ ընդհանուր եւ պարտադիր է իւրաքանչիւր անհատի համար, թող չէ տալիս այդ տեսակ ստիպման միջոցը (տես Селъское Положеніе), որը գործ են գնում մեր գիւղի հարկահաւաքները: Օրէնքը թող է տալիս՝ հարկ վճարել չը կարողացող գիւղացու ապրանքը, տան ունեցածը ծախու հանել, կամ նոյն իսկ այդ գիւղացիներին տալ որ եւ է ծառայութեան եւ այդպիսով գոյացած փողը վերցնել հարկի հաշուում, բայց բանաւարկել, ազատութիւնից մի կամ երկու օր դրկել գիւղացուն, որ նա ստիպվի աւելի շուտ վաշխառուի գիրկը ընկնել՝ դա օրէնքի տեսակետից զատապարտելի մի կամայականութիւն է: Իսկ այդ բանը օրը ցերեկով Շուլաւէրում կատարվում է եւ, պէտք է ձիւղը ասել, շարունակ կատարվել է նախընթաց տարիներում էլ: Միթէ միանգամայն սխալ եւ անբովանդակ է այն ասացումը, թէ «աղքատ ես» մեղադրու ես:»

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Դեկտեմբերի 25-ին

Հետաքրքրական է իմանալ, կայ արդեօք մեր եկեղեցական կանոնները մէջ մեղեքներին թաւելու տակայ թէ ոչ: Ամեն մի քայլում, երբ մի եւ նոյն վարմունքը իրան թող է տալիս անուա եւ անկրթ մէկ մարդ եւ կրթված, բարձր ուսում առած համալսարանականը, մենք ասում ենք, որ առաջինին ներկիւն է, որովհետեւ անուա է, կարգին կրթութիւն չէ ստացել, իսկ երկրորդին մենք չենք ներում, ի նկատի առնելով նրա համալսարանական ուսումը:

Յայտնի է, որ համարեա ամեն տարի էլ միաձինր ուղարկում է այս կամ այն վեղարաւորին զանազան քաղաքների՝ աղատ ունկնդիր լինելու համար համալսարանում: Զը խօսելով այդ վեղարաւորների մեծամասնութեան ունայն կերպով եւ առանց մի որ եւ չայտնի օգուտ ստանալու տարիներ եւ տարեկան 600 ռուբլի ծախսելու մասին՝ պէտք է ասել, որ դրանցից մի քանիսին աջակցում է մի կերպ դառնալ (կամ նըրանակվել) այս կամ այն քաղաքի ժողովրդի հոգեւոր հովիւ եւ միթէարի, ինչն ըստ ինքեան արդէն տղեղ երեւոյթ է երբ, ինչ ինչ շարժառիթները դրդված, մարդ իր վրա է վերցնում երկու անհամապատասխան պաշտօն, ինչպէս է լինել ուսանող եւ մի եւ նոյն ժամանակ վարել 400—500 մարդուց բաղկացած գաղութի հոգեւոր հովիւի պաշտօնը: Մինչեւ այժմ էլ մեզ համար անհասկանալի է, թէ ինչպէս եւ ինչ չին դրդված, այս կամ այն վեղարաւորը վերցնում է իր վրա այդպիսի երկու գործ, մոռանալով, թէ ինչի համար է ուղարկված:

Ինչպե՞ս մեզ յայտնի է, մեր հոգեւորականները իրաւունք չունեն հրաժարվելու զանազան հարկաւոր եկեղեցական ծխականատրութիւնների կատարելուց: Բոլորս կամ լսել, կամ կարդացել ենք այն դէպքերի մասին, երբ մեռել օրերով մնացել է առանց թաղվելու. չը թաղելու դեպքում պատճառաւորութիւններն իրարը եղել է զլիաւորապէս մի բան—մէջտեղ փող չը կայ, վարձատրութիւն չը կայ: Այդպիսի դէպքերում համարեա միշտ մեր առաջ կանգնած են եղել անուա եւ տղէտ քահանաներ, որոնք պատշաճաւոր կերպով չեն վերաբերվում դէպի իրանց պարտականութիւնները:

Բայց ցաւալին հէնց այն է, որ համարեա նոյնաման դէպքեր պատահում են եւ մեր համալսարաններում, ուսանող վեղարաւորների հետ, որոնց յամենայն դէպք անուա եւ տղէտ անուանել չենք կարող, ի նկատի առնելով ձեւաբանը անցեալում եւ համալսարանը ներկայում:

Տարիների ընթացքում չիվկելով միշտ ուսանողներին հետ, մասնակցելով զանազան ուսանողական ընկերութիւններին, մեր վեղարաւորները կամայ ակամայ ասեն մի քայլադիտում հանդիպում են ընդհանրապէս օղբունքին—օղբն իր մերձակորին պէտք եղած ժամանակը, ուշադրութիւն չը դարձնելով նիւթականի վրա:

Մեզ համար ուղղակի անհասկանալի է, թէ ինչն է ստիպում մեր ազատ ունկնդիր-վեղարաւորներին փողով ակտիւսել այն կամ այն եկեղեցական ծխականատրութիւնը, մասնաւորապէս Սիւնիքի: Միթէ նիւթականը լիք է այդ է, բաւական է ուրեմն յիշել, որ այդ բոլոր վեղարաւորները, վարելով աւելի համեմատ կենքը, քան ամսական 30 ռ. ստացող ուսանողը, ստանում են 50 ռ. ամսավար: Այդ

տղեղ երեւոյթի բացատրութիւնը մնում է որոնել միայն մի հանգամանքի մէջ, այն է, որ այդ անձնատրութիւնները կղերական են:

Բայց այդ բոլորը դեռ ոչինչ, երևակայեցէ՛ք, ընթերցող, որ մի քաղաքի գաղութ, գրկվելով իր հոգեւոր հովիւից եւ կամենալով ազատ ունկնդիր-վեղարաւորի դէպի գիտութիւնը ունեցած ծարաւը յագեցնել, թողնում է իր մօտ հոգեւոր հովիւի պաշտօնով այդ վեղարաւորին, ապահովելով թէ նրա ապրուստը եւ թէ համալսարանի վճարը, տալով ամսական 50 ռուբլի: Այդ վեղարաւորը, ուրեմն, դուրս է գալիս մի վարձված անձ, որը պէտք է ունենայ որոշ պարտականութիւններ դէպի իրան վարձող անձը կամ հիմնարկութիւնը: Վարձողը գաղութն է, վարձվածը—ունկնդիր-վեղարաւորը, իսկ պարտականութիւնները—զանազան եկեղեցական ծխականատրութիւնների ձրի կատարելը: աւելի պարզ, մեր կարծիքով, չէ կարող լինել:

Բայց մեր նայր-սուրբերին բաւական չէ թւում ամսական 50 ռուբլի ստանալ, երբ նրանց վարձող գաղութի անդամի թաղելու համար ստանալու են քսան ռուբլի. այդպիսի գումարի մասին մեր տէրտէրներից ոչ մէկը չէ էլ երազում անգամ, իսկ համալսարանական-վեղարաւորը անբաւական է, այնպէս որ հանգուցեալի նորածնով գերեզմանի վրա, բոլորի ներկայութեամբ, դալալի պէս դիմում է նրան փող ստուղին այս խօսքերով. «Տօ, ինչ ես անում, մի տաք մանէթ էլ աւելացրու...»

Գեղեցիկ պատկեր...

Ու—ող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Կոյրերի խնամատարութեան Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի հոգաբարձութեան Կովկասեան բաժնումունքի խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այժմ Թիֆլիսի կոյր երեխաների ուսումնարանում կան իրանց հաշուով սովորող աշակերտների եւ աշակերտուհիների ազատ տեղեր: Վարձը տարեկան 300 ռուբլի է: Մտնող երեխաները պէտք է լինեն 7-ից մինչեւ 11 տարեկան, երկու աչքով անբոժելի կոյր, ընդունակ կրթութեան եւ ուսման եւ բացի կուրութիւնից չը պէտք է ունենան ուրիշ որ եւ ֆիզիկական պակասութիւն: Պէտք է դիմել—Թիֆլիս, խորհրդի դիւանատանը (Юрисъ-Меликовская, канцелярія военно-окружнаго совѣта):»

Մօսկվայում առաջիկայ փետրվար ամսից բացվում են օրագրութեան կուրսեր, որոնց նպատակն է պատրաստել տպագրողների համար հմուտ աշխատողներ: Համապատասխան այս նպատակին՝ կուրսերում կը դասաւանդվեն հետեւեալ առարկաները. 1) ընդհանուր հասակացողութիւն տպարանական գործի մասին (տառերի տեսակներ, շարի, ցրվել եւ այլն), 2) օրագրութեան գործնական ուսումնասիրութիւն, 3) ռուս լեզուի քերականութեան ուսումնասիրութիւն, 4) ձեռագրերի ընթերցումը, 5) ծանօթութիւն օտար լեզուների հետ այնքան, որքան այդ անհրաժեշտ է օրագրողի համար (ֆրանսիական, գերմանական, անգլիական, իտալական, լատինական եւ յունական լեզուներ), 6) տպագրութիւն եւ 7) ուսուցում աշխատանքը գործ մեքենաներով: Կուրսերը կարող են ստնել երկու սեռի անձինք 100 ռուբլի վարձով: Կուրսերում ուսումը կը տեւէ 4 ամիս, երեկոները, ժամի 6-ից մինչեւ 8-ը:

Պետերբուրգում ապրող հայերի մէջ, ինչպէս հաղորդում է «Донецкая Рѣчь» լրագիրը, կազմվել է մի խումբ, որի նպատակն է մի ընկերութիւն հիմնել Ռուսաստանում ապրող հայերի մէջ լուսաւորութիւն տարածելու համար: Առ այժմ մշակվում է այդ ընկերութեան կանոնադրութիւնը:

Այս յունվար ամսի վերջին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, պետական խորհրդում կը քննվի ֆինլանդական զինուորագրական օրէնքների բարեփոխութեան հարցը:

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են. «Ութ օր առաջ Գիւրաքաղաքի գիւղում բնակվող գաղթական Սարգիս Դազարեանը չորս արշին չթի համար կռոււ է տանցիների հետ, իբր թէ իր կնոջը բաժին չէ հասել, դարկում է սուր զանաւով եւ իր հարսին վիրաւորում: Երբ այդ նկատում է նրա հօրեղբայրը եւ ուղղւում է դանակը ձեռքից առնել, այդ ժամանակ խրում է դա-

նակը հօրեղբոր փորը, որը եւ անմիջապէս մեռնում է: Հարսը երեք օր կենդանի մնաց եւ սարսափելի տանջանքներ կրելուց յետոյ մեռաւ, իսկ Սարգիսը փախել է: Գործը օրինական կարգով յանձնված է քննչին: Մի քանի օր առաջ ձաւա գիւղում մի հաւի պատճառով քարով զարկում են մի գաղթական տղայի կողքին. ութ օր ապրելուց յետոյ տղան մեռաւ: Բաւոյի գիւղում երկու տղայ կռոււ են միմեանց հետ եւ մէկը միւսին խանջաւով սպառնում է: Գործը յանձնված է քննչին:»

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵԻԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 7-ին, երեկոյեան, Նոր-Նախիվեանի աւելըմանոցում Նոր-Նախիվեանի Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովն էր ժողովին ներկայացրած հաշիւից երեւաց, որ մուտք եղել է 7,080 ռ., ծախք նոյնպէս 7,080 ռ.: Ընկերութիւնը 116 սաներ եւ անուհիներ է պահում դանազան դպրոցներում: Ընդհանուր ժողովը ընդունեց խորհրդարանի հաշիւը եւ որոշեց ծախսել 1901 թ.—7,000 ռ.: Համաձայն նախագահ Գր. Չախուչեանի առաջարկութեան, ժողովը ոտքի կանգնելով, յարգել Խորհրդի Ստեփանի յիշատակը եւ որոշեց պահել թեմական հոգեւոր դպրոցում մի սան Խորհրդի Ստեփանէի անունով:»

Մօտ օրերս Թիֆլիս է եկել Պետերբուրգից յայտնի փաստաբան Կարաբէյլովի:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՎԻՑ մեզ գրում են. «Մինչեւ յունվարի 5-ը եղանակը շատ մեղմ էր, զարմանալի, բայց յունվարի 7-ից սկսած փոխվեց եւ այժմ արտափելի ցուրտ է: Ձիւն չկայ, բայց ցուրտը մինչեւ—20 % R. Եղանակի փոփոխուելը լաւ նշան չէ համարում ժողովուրդը, եւ իրաւ, շատերը ձմեռ չը կայն ասելով, պատրաստ չէին ձմեռվան. որը տաք հագուստ չունեն, որը վառարան, որը փայտ: Այժմ սարսափելի ցուրտը ամենքին վախեցնում է:»

ԳԵՕՐԳԻԵՎՍԿԻՑ մեզ գրում են. «Գեօրգիւկիսի քաղաքային դպրոցի ուսուցիչ պ. Յարութիւն Խաչատրեանի կարճ ժամանակվա եռանդուն ջանքերով, տեղիս փոքրամիջ հայ հասարակութիւնը, Ջորճիէի տոներին, բաղդաւ ունեցաւ եկեղեցում լսել Եկմալեանի ներդաշնակած եկեղեցական երգեցողութիւնը: Երգեցիկ խումբը առ այժմ կազմված է 12 հոգուց, որից 2-ը օրիորդ, Երբ պ. Խաչատրեան ձեռնարկեց խմբի կազմակերպելու, շատերը սկսեցին ծաղրել, հաւատացած լինելով, որ ոչինչ չի լինի, որովհետեւ խմբին մասնակցողներից զերթէ կէսը ոչ միայն չէր կարողանում հայերէն կարդալ, այլ եւ խօսել: Բայց պ. Խաչատրեան չը յուսահատուց, պատրաստեց տեսեր ռուսերէն եւ լուսիներէն գրերով, օրինակ՝ «Երբեք, Երբեք, Երբեք, Երբեք sorpathian», բաժանելով խմբի մէջ, եռանդուն կերպով ըսականց զբաղվել: Արդիւնքը հիանալի էր. առաջվա ծաղրողները լիովին զարմացան: Երգեցողութիւնը առ այժմ միաձայն է: Բայց, ինչպէս լսեցիք, պ. Խաչատրեան սկսել է պատրաստել մեծերի եւ փոքրերից ջառագանջ խումբ: Գովում ենք պ. Խաչատրեանի այդ համակերպի քայլը:»

ՀԻՆ-ՆԱԽԻՉԵԻԱՆԻՑ մեզ գրում են. «Հին տարին վերջացաւ կատարեալ գարնանային եղանակով: Ամառը աշուն եւ ձմեռայն համարեա կէսը անցաւ, մինք անձրեւի, ձիւնի երես չը տեսանք: Եղանակը դեկտեմբեր ամսին այնքան տաք էր, որ ձանապարհներին կառքերի երթեկեւորութիւնից սաստիկ թող էր բարձրանում: Եղանակի չորային անցնելու պատճառով կենսական մթերքների գները սաստիկ բարձրացան. մի կողմից էլ ինֆլուէնցան, իր համաճարակ բնաւորութեամբ, առատ հնձում էր թէ քաղաքում եւ թէ գիւղերում: Բայց նոր տարին իր հետ վերելք ցուրտ օրեր եւ առատ ձիւն, Յունվարի մէկից այսօր ձիւղ ու թերեղ օրն է, որ ամեն օր ձիւն է դալիս: Այդ հանգամանքը աղիցք միայն ցորենի գին վրա եւ 90 կօպէկից իջեցրեց 60—70 կօպէկի: Ինֆլուէնցան դեռ շարունակում է իր հունձը: Օր չէ անցնում, որ քաղաքում 2—3 մահ տեղի չունենայ: Գիւղերում հիւանդները, դուրս լինելով բժշկական ամենատարրական միջոցից, աւելի են մեռնում, ենթարկված լինելով բաղդի կամքին եւ պառանքների քրժկական» հնաբաղրութեան: Մեզ մօտ առատ ձիւնը ընդունվեց իբրեւ նոր տարվայ ընծայ, ուստի ամենքը բարձրաձայն նոր տարին են փառաբանում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԻՏԱԿԱՅԻՑ

Հոսմ, յունվարի 8-ին

Հոսմի գլխաւոր փողոցներից մէկը վրա, սկարոյոս եկեղեցուն կից, մի չքեղ ապարանք է երեւում: Հրաւիրում եմ յարգելի ընթերցողին այդ ապարանքի մարմարեօնէ սանդուղքներից վեր բարձրանալ, որով, յանկարծ, առաջին դատիւնի հովեական ճաշակով կատուցված մի դաշիւնի մէջ պիտի գտնէ իրան: Այնտեղ կարող է նկատել բազմաթիւ խորհրդաւոր բանաստեղծական յայտնի նկարներ պատերի եւ առաստաղի վրա, դիմացը Լեւոն XIII պապի պղծեալ կիսաքանդակ է դրած, որ իր բարձր դիրքով իշխում է ամբողջ դաշիւնի վրա. կիսաքանդակ սոճի, սանդուղքի երեք-չորս աստիճաններով բարձր բեմի վրա, մի թիկնաթոռ է դեռեղված եւ գրառեղան, որի վրա երկու աշտանակ մոմերով եւ ջուր: այս եւ այն կողմը էլէկտրական լոյսի բաղմամբ թիւ ճրագներ: Իսկ բեմի առջեւ դրված են բազմաթիւ թիկնաթոռներ, կարգով չարված, եւ դրանց վերջը ուրիշ աթոռներ, մինչեւ դաշիւնի դուռը. բեմի աջ կողմը դրված են դաշնամուրը, փանդոն, օրիդը եւ այլ երաժշտական գործիքներ:

Դա Հոսմի գիտնականների կաճառի վայրն է, որ Արկադիա (Arcadia) է կոչվում: Այստեղ իւրաքանչիւր ամսի որոշակ օրերին հաւաքվում են Արկադիայի անդամները, որոնք թէ եկեղեցական եւ թէ աշխարհական դասակարգի գիտնական եւ բարձրաստիճան անձնաւորութիւններ են: Այստեղ յաճախում են գիտութիւն սիրող բազմաթիւ անձինք, առանց սեռի խտրութեան: Արկադիայի մէջ տեղի են ունենում բնական, հնախօսական, գեղարուեստական, պատմաբանական, մատենագրական, աստուածաբանական, բանաստեղծական եւ այլ գիտութիւններին վերաբերեալ ճառեր եւ բանաստեղծութիւններ:

Դեկտեմբեր ամսվայ ընթացքում մի քանի լրագիրներին մէջ հրատարակվեց, որ Յարութիւն արքեպիսկոպոս Բուպեան Արկադիայի կաճառի մէջ ճառ է խօսելու, դեկտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը 3-ին: Մուտքը տոմսով էր, բայց ձրի, եւ երբ պատեւ ունեցայ մի տոմսիկ ստանալու եւ ներկայ գտնվելու հայ-եպիսկոպոսի առեւնաբանութեան:

Արկադիայի դաշիւնի մէջ խումբ երկուսը բազմութիւնը գրաւած էր աթոռները եւ ամենքն էլ հանդիս բացման էին սպասում: Դաշիւնի առաջին թիկնաթոռի վրա բաղմամբ էր ծիրանաւոր (cardinale) Վինկեսիոս վանութէլլի, որի աջակողմը ծիրանաւոր Գաղայի եւ ձախակողմը ծիրանաւոր Լօքէ եւ այս կարգով աջ եւ ձախ բաղմամբ էին եպիսկոպոսներ, ծայրագոյն վարդապետներ, կոմսեր, կոմսուհիներ եւ այլ իշխանաւորներ:

Նախ եւ առաջ սքանչելի ներդաշնակ երգեցողութիւն տեղի ունեցաւ դաշնամուրով: Եւ տայ Արկադիայի վարչապետը՝ Բարթոլոմէ մի պերճախօս առեւնաբանութեամբ բացատրեց Արկադիայի բարձր նպատակը եւ նրա մարդկային ընկերութեան նպատակաւ ձգտումները: Ապա Բուպեան հայ արքեպիսկոպոսը (arcivescovo armeno) բաղմնով թիկնաթոռի վրա եւ ապա ոտքի կանգնելով՝ ճառի նախաբանը բեւրանացի խօսեց (խաւերէն լեզուով), որ ընդհատվեց բուռն ծափահարութեամբ, յետոյ վերջապէս բաղմնով կարգաց բացաղանչօրէն իր յօրինած ճառը: Փաստելով ցոյց տուեց, որ Գրիստոսի գործերը սկզբից մինչեւ այժմ պերճախօս վկաներ են իր աստուածութեան, այդ բանը աստուածաբանական եւ պատմական փաստերով ապացուցանելուց յետոյ, եկեղեցու նախկին դարի դիտական հայրերի վկայութիւնները մէջ բերեց եւ առանձին եղանակով չելտեց Հայաստանեայց եկեղեցու անխախտ հաւատը հինգերորդ դարից առաջ մինչեւ այժմ եւ մեր շարակցեցից մի քանի վկայութիւններ բերեց, որով Ներսէս Շնորհալին երգում է խոստովանելով Աստուածածնի միշտ կուգուցիւթիւնը եւ Գրիստոսի աստուածութիւնը: Երկու կայ եղողների զգացումը անկարագրելի էր, ամենքը գրուստում էին պերճաւան եպիսկոպոսի բնատուր ձրեքները:

Հանդիսի վերջը դարձեալ երաժշտութիւններ եւ բանաստեղծութիւններ տեղի ունեցան, որից յետոյ ծիրանաւորները եւ ականաւոր անձինք առանձնապէս իրանց խղիւղեցողութիւնը յայտնեցին Բուպեան եպիսկոպոսին. ժողովըրդականներն արդէն բուռն ծափահարութեամբ յայտնել էին իրանց համակրանքը:

Սարգիս վ. Տէր-Աբրահամյան

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—Օսթրիա ամբողջ, որտեղ վախճանվեց Վիկտորիա թագուհին, գտնվում է Ուայտ կղզու վրա, որ գտնվում է բրիտանական ջրանցքում, ոչ հեռու Անգլիայից ցամաքից, կղզու երկարությունը 35 կիլոմետր է, լայնությունը—20 կիլոմետր, տարածությունը—146 քառակուսի մղոն: Կենտրոնում կղզին բարձրանում է եւ կազմում կաւճային բլուրների մի շղթա: Ուայտ կղզին Միացեալ թագաւորութեան ամենագեղեցիկ անկիւններից մէկն է: Կղզու հարաւային մասը բաղկացած է ժայռաւանդակի, իսկ արեւմտեան մասը ծածկված է դիւնային, որոնք գեղեցիկ արօտներ են անասունների համար: Կղզու գլխաւոր քաղաքը Նիւ-Պորտն է, միւս խոշոր կենտրոններն են Կոուս, Եարմուտ, Բայլ և Վենտնոր քաղաքները, որոնք ամառը մեծ զբոսընկերներ են գրաւում Անգլիայից և եւրոպական ցամաքից իրանց ծովային լողարաններով: Կոուսի մօտ գտնվում է արքայադուռ Օսթրիա ամրոցը (Osbome House), որ Վիկտորիա թագուհու սիրած բնակատեղին էր: Օսթրիա գտնվում է կղզու հիւսիսային մասում, ծովափին մօտիկ: Կղզու հանդէպ, Անգլիայի հարաւային ծովափում, գտնվում են Պորտսմութ և Սուտհամպթոն քաղաքները: Ներքին լայնութիւնը, որ բաժանում է Ուայտ կղզին Անգլիայից ցամաքից, 5—6 վերստից աւելի է:

—Բերլինից հեռավորում են «Рус. Вѣд.» լրագրին: «Հանգուցեալ թագուհու մարմինը տեղափոխութիւնը դէպի Վինձոր կը կայանայ յունվարի 19-ին, իսկ թաղումը—յունվարի 20-ին: Մահվանից առաջ թագուհին ցանկութիւն յայտնեց, որ նրա թաղման ժամանակ տեղի ունենայ զորահանդէս: Զինուորական ամբողջ նաւատորմը հրաման ստացաւ հաւաքուիլ յունվարի 19-ին Սպիդհէլտ: Դեռ եւս որոշված չէ, թէ յուզարկաւորութեան հանդիսաւոր գնացքը կանգ կառնի Վեստմինստերի արքայութեան առաջ թէ ոչ: Թագուհու մարմինը կը դրվի նախ եղեւնափայտից չինված դաշաղի մէջ, ապա դաշաղի երեսին կը խփին արձնայ չորտեր և յետոյ այդ ամենը կաւփովի կաշեկապ, արտաքուստ ոսկեկուռ, դաշաղի մէջ: «Medical Journal» հրատարակել է պաշտօնական հայել թագուհու հիւանդութեան ընթացքի մասին: Արդէն ամբողջ տարվայ ընթացքում Վիկտորիա թագուհին մարտողական գործարանների հիւանդութիւն ունէր, ապա սկսվեց անքնութիւն, ժամանակ առ ժամանակ նկատվում էր խօսելու ընդունակութեան խանգարում (ափսոսել), առաջացած ուղեղային աւնոթների խանգարման աղիքներից: Յայտնի անդամալուծութիւն չէր նկատվում: Օսթրիա ամրոցը տեղափոխվելու օրից թագուհին զգում էր ջրային արտաթորութիւն, ափսոսել և լիակատար անտարբերութիւն: Սիրտը խրվում էր կանոնաւոր միջին մահվան րօպէն: Զերմութիւնը չարունակ նոյնն էր, ընկան Մահվանից մի քանի րօպէ առաջ թագուհին ճանաչում էր քաղաքական ընտանիքի բոլոր անդամներին:

—«Manchester Guardian» հաղորդում է, որ Իռլանդիայի լրագրի ոսկու հանքերը չահագործող ընկերութիւնները այժմ միանում են միմեանց հետ, այնպէս որ Տրանսվալի ապագայ կառավարութիւնը գործ կունենայ մի հսկայական տրեստի հետ, որի մէջ մտնում են Վէրնէրի, Բէյտի, Բոքինգհեմ և ուրիշ ընկերութիւններ: Միայն մի ընկերութիւն դեռ եւս չէ միացել այդ տրեստին, բայց նա էլ, երեւի, չուտով ստիպված կը լինի դիմանալ նոր կազմվող ընկերութեան ահազին ոյթի առաջ:

—Բերլինից լրագրիներին հետագրում են, թէ Սաքսոնիայի պալատական կաթոլիկ քահանան բողոքականութիւն է ընդունել: Դրեզդէնի պալատը երկար ժամանակ ծածկում էր, թէ ինչ հանգամանքներում է տեղի ունեցել կրօնափոխութիւնը: Բանն այն է, որ թագաւորը պատուիրեց քահանային ուսումնասիրել բողոքական շարժման գրականութիւնը Հոմի դէմ, ուսումնասիրելով այդ, քահանան ինքն անցաւ այդ շարժման կողմը, փոխանակ, ինչպէս մըտադրութիւն կար, սկսելու վիճարանութիւն Հոմի պաշտպանութեան համար:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

16 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ Յունվարի 15-ին, ծովային կորպուսի 200-ամեայ գլուխեան յօրեկանի տօնախմբութեան երրորդ օրը, Մարինսկի թատրոնում տեղի ունեցաւ հանդիսաւոր ներկայացում, որին ներկայ էին Թաւրուսի Կայսրը, Թագաւորանդը, Մեծ-Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, Մեծ-Իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնա, Մեծ-Իշխանուհիներ Օլգա Ալեքսանդրովնա և Ելենա Վլադիմիրովնա, Մեծ-Իշխաններ Սէրգէյ Ալեքսանդրովիչ, Միխայիլ Նիկոլայովիչ, Կիւրիլ Վլադիմիրովիչ, Ալեքսանդր Միխայիլովիչ և Սէրգէյ Միխայիլովիչ: Ներկայացում էին «Եւգենի Օնեգին»: Ներկայացումը վերջացաւ երեք անգամ կրկնված օրհներգով:

ՊԵՆԻՆ, ԼԻՒՍԵՆԳ-ՉԱՆԳ հիւանդ է սաստիկ ջերմ ու տենդով, առողջանալը կասկածելի է: Յունվարի 14-ին Չվանգ եւ Իւսիէն մահվան պատժի ենթարկվեցին: Պրինց Չուն եւ նրա եղբայրները ընդունվեցին Վալդերգէէից կայսերական պալատում:

17 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ Յունվարի 16-ին ծովային կաղնեների կորպուսում տեղի ունեցաւ մի փառաւոր պարահանդէս, որին ներկայ էին մօտ վեց հազար անձինք:

ՄՕՍԿՎԱ Քաղաքային խորհուրդը քաղաքադաւր ընտրեց իշխան Գոլիցինին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ Այստեղ պաշտօնապէս կարգաւորված յայտարարագրի մէջ մեծ-բրիտանական էրուարդ VII թագաւորի դաժակալութեան մասին, ի միջի այլ տիտղոսների, յիշատակված է եւ «Գերագոյն Տէր Տրանսվալի» տիտղոսը: Յայտարարագիրը կարգաւորեց յետոյ Կիտլենի երեք անգամ «ուսա» կանչեց ի պատիւ թագաւորի:

ԼՈՆԴՈՆ Թագաւորը եկաւ այտեղ Կեմբրիջի եւ Տէլի դոքսերի ուղեկցութեամբ:

ՊԵՆԻՆ: Հաղորդում են, թէ Լիւ-Սուեն-Չանգին եւ Յինն աղողվեց ըսնը այնպէս սարքել, որ Շէնին եւ Չուֆուին հրամայվեց ամանակ-ցիլ խաղաղութեան ըսնականութիւններին: Չուֆու, որ քիչ ժամանակ առաջ նշանակված էր Չփիլի նահանգի գահաւարտ, առաջ չինական ղեկաւոր էր Կօրէյալու: Գերմանացիները այսօր սկսեցին բարակներ չինել ղեկաւորատան պահպան գործի համար:

ԽՈՐԱԳԻՐ ԱՆԷՔՍԱՆԴՐ ՔԱՆՆԵՐԱՆ
Հրատարակչներ ՔԱՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ո Ր, բ ա ջ ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Ի ց:
Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վերաբուժութեան, վերնական (սիֆիլիս) և միզաուռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեւրոլոգիայի հ.

Կ. Բ. Գեղիլեվ—12—1 ժ. ականջի, քթի և կտորի հ.

Զ. Բ. Բաբանսեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխայից հ.

Ե. Ն. Ռոստոմիրով—5—6 ժ. վերաբուժութեան և մորթու հ.

Կ. Ն. Եղիլեվ—6—7 ժ. նեւրոլոգի (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.

Գ. Ա. Թաւրաւով—7—8 ժ. ներքին և երեխայից հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7—8 ժ. Վար 50 կ. ջատարները ձրի համախորդի (կօնսիլիս) և օպերացիայի համար առանձին:

Օ. Յ. Աւալանիսկի—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ:

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթաւորութեամբ: Մեծ արկղիկը 5 րուրի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփու: Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱԹԸ

Երեսին ընթելութիւն և ուղիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուկերը, տալիս է կաշուին ընթելութիւն և սպիտակութիւն: Այդ գինը չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ. Մախվում են բոլոր պարֆումերական և դեղաւորաւորական խանութներում: Դիլաւոր պահանջող գտնվում է Պետերբուրգում, Պոլիսկայա փողոց տ. № 15, քահաւարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են: Թիֆլիսում կովկասեան դեղատանն ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսինեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազուրմ. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի գեղատեսերւոյ: Օտարաքաղաքացիները պատուէրներ կատարվում են անմիջապէս՝ պօստով: 43—100

Կիրակի, յունվարի 21-ին, 1901 թ.
Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ժ Ո Ղ Ո Վ Ս Ր Ս Ն Ի Դ Ն Հ Լ Ի Ժ Ո Ւ Մ
Կը արվի գեղարուեստական երեկոյ
21-ՆԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Յօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Պարահանդէսին կը լինեն չինական պարեր, ազգային հաղուսներով և մի ազնւական չինուհի կը բաժանէ սիւրպրիզներ և կօտիլիօնի ընծաներ:

Տիկիններին խնդրում են սանրված լինել չինական ձեւով, իսկ տղամարդիկ՝ ունենան չինական հովհարներ: Զր ցանկացողները վճարում են տուգանք 50 կօպէկ:

Ս կ ի զ ը Ն է Ե ր ե կ ո յ և ա Ն 10 ժ ա մ ի Ն:
ՄՈՒՏԳԸ 2 Բ. 10 ԿՕՊԷԿ

Նախօրը տոմսակ ստանալ ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թումանեանցին (Բաւրեաթնակայեա, № 8):

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին—XVI—XVII դար

ԳԻՆԵ Է 1 ՐՈՒՔԼԻ 50 ԿՕՊԷԿ
Մախվում է Թիֆլիսում, «Մշակ» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Типлицъ, редакция «Мшакъ».

„Շ Ղ Թ Ա Յ“

ՆԱԽԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն պ. պ. փայտեղերի և փայեր ձեռք բերել ցանկացողներին, որ ամսին 21-ին վերջնականապէս լրանում է փայեր բաց թողնելու ժամանակը:

Նոր փայեր ձեռք բերել ցանկացողները պէտք է մոյնեն 15-ական րուրի իւրաքանչիւր փայի համար ընկերութեան գրասենեակը, Երեսինեան հրապարակ, տուն Խարազեանի քաղում:

3—5

Յունվարի 20-ից Թիֆլիսում

ԲԱՅՎՈՒՄ Է ՆՈՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵԱՐԱՆ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի հասակաւոր անձանց համար

Պարտադիր առարկաներն են.—1) տեխնօգիա, 2) հաշւապահութիւն, 3) ապրանքագիտութիւն, 4) թղթակցութիւն, 5) թուաբանութիւն հաշւարարով, 6) առեւտուր, 7) առեւտրական թուաբանութիւն, 8) դեղագրութիւն, 9) առեւտրական օրէնքներ, 10) բանկային գործը: Ան պարտադիր առարկաներ.—օտար լեզուներ և ուղագրութիւն:

Հաշւապահական կուրսերն ընդունվում են երկու սեռի անձինք ոչ պակաս 15 տարեկանից, որոնք աւարտել են ուսման ընթացքը կամ քաղաքային դպրոցներում կամ դուրս են եկել միջնակարգ դպրոցների 3-րդ դասարաններից և կամ ըսնել են համապատասխան ըննութիւն: Պարագմունքները բաժանված են կիսամեակների: Ամբողջ դասընթացը վճարը 60 րուրի է: Ընդունվելու ընդունվում են ամեն օր կուրսերի գիւնդատանը, Միքայէլեան պրօպէկտի վրա, № 56 կամ հիմնարկի ընկալարանում, Միքայէլեան փող, № 71:

4—10

Հիմնադիր կուրսերի Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՅՕՆ-ԲՐԵՆԵՐ

ՀԱՇՈՒՆԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՏՆԻՄԱԿԵՐ XII շրջան

ՆԻԿՈԼԱՅՈՍ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի» աւետարական և գործարանական հաշուապահութեան ՌՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՐ ՊԱՏԱՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւրաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՆԻ ԱՌԱԿԱՆԵՐՆԵՐ
Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւնը ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսնի գործարանական հաշուետեսութեան:

Բ) Առեւտրական թուաբանութիւն:

Գ) Առեւտրական համակարգութիւն:

Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնադրութիւն:

Ե) Գեղագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղելը:

Պարագմունքները սկսվելու են 1901 թ. յունվարի 20-ից, ճաշից յետոյ, և պա. բերաբար չարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ:

Ի Ի Ր Ա Ք Ա Ն Զ Ի Ի Բ Կ Ո Ւ Ր Ս Ի Վ Զ Ա Ր Ն Է 60 ՐՈՒՔԼԻ

Ցանկացողները թղթ դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ամսից մինչև 6 ամս երկիւղեան, Կ Ո Ւ Կ Ի Ա, Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Николаевская ул. № 46):

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Տեղի սկի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: Դիմել է 3 ր. 50 կօպէկ: Օտարաքաղաքացիները գրեթէ զինելու համար կարող են դիմել Նիկոլայեւսկին, առանց պրօստի ծախս վճարելու:

9—15

ԲԱՅՈՒՄ Է ՆՈՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵԱՐԱՆ

Կանոնաւոր եւ ուղղակի հաղորդակցութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՅՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն և Պօլս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 17/30 յունվարի—չորեքշաբթի Միկոլայեւսկին, կապիտան ԴԵԼՏ: Եւ այնպէս չարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ արվում են ամբողջականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի Կ. Անապեայեւի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստներ համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու աւար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալութիւն:

ԲԱՅՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՐԵՐԻՆ, Երեւելեանայա ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիւնի փող. Խօջափարութեան և Մայսաբաձէի քաղաքաւար ԲԱՅՈՒՄ—Եղբ. Վ. և Ի. Մուլաֆեաններին, Երեւելեանայա փողոց, տուն Կրպիլեիովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄ—ՍԻՅՍԿ—Վաղրիկաւայի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Տ. Շ.)

20—20